<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԳՀԱՊՁԲ-2019/16-13-ԵՊԲՀ>>

ք. Երևան_ «13» մայիսի 2019թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդիտեք» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 22000000(քսաներկու միլիոն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը

վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ հարյուր երեսուն օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	«Մեդիտեք» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Ք.Երևան, Ծովակալ Իսակով 22/3
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 2050022326301001
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 01222077
Ռեկտոր՝ Ա.Ա. Մուրադյան	Տնօրեն՝ Ա.Խաչատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 13 » մայիսի 2019թ. կնքված
N <<ԳՀԱՊՁԲ-2019/16-13-ԵՊԲՀ>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքանիշը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	33171700	Ինհալացիոն անզգայացման սարք, Fabius Plus XL	Draeger, Գերմանիա	Ինհալացիոն անզգայացման սարք՝ երկու գոլորշացուցիչներով, խնամյալի և շնչառական մոնիտորներով: Սարքը հատակին տեղակայվող է, ունի երկու դարակներով պատվանդան: Սարքի թոքերի արհեստական օդափոխության /ԹԱՕ, ALV/ միավորը միկրոպրոցեսորային կառավարմամբ և էլեկտրական շարժաբերումով: ԹԱՕ-ի միավորի աշխատանքային ռեժիմները՝ • Ծավալի ղեկավարմամբ / VCV • Ճնշման ղեկավարմամբ / PCV • Ճնշման աջակցությամբ սպոնտան շնչառության PS • Ճնշման աջակցությամբ ծավալի ղեկավարմամբ PS VCV • Ճնշման աջակցությամբ սինքրոնացված ինքնուրույն/պարտադրական վենտիլյացիա (SIMV) / SIMV/PS • Ձեռքով / Manual Ventilation • Սպոնտան Սարքի կառուցվածքը և բաղկացուցիչ մասերը՝ • Պատվանդան բարձր • Բազային միավոր՝ 3 գազեր, թթվածնի և օդի կենտրոնական մատակարարման խողովակներ /3 gas, flow tubes O2/AIR// • ԹԱՕ /ALV/միավոր • Էլեկտրասնուցման միավոր, որն 45 րոպեների ընթացքում ապահովում է սարքի աշխատանքը հիմնական սնուցման անջատման պարագայում • Կոմպակտ շնչառական միավոր, ներկառուցված 1,5լ ծավալով CO2 կլանիչ և թարմ գազերի հանգույցներով: CO2 կլանիչը և շնչառական հագույցները տեղակայված են շարժական, բարձրությունը կարգավորվող լծակի վրա՝ սարքի ձախ կողմում: • O2 / N2O / AIR թարմ գազերի մատակարարման հոսքաչափեր 0.0 լ/ ... 12 լ/ր տիրույթի, մանոմետրեր (3 հատ 3 գազերին համապատասխան)՝ բժշկական գազերի կենտրոնական համակարգից ստացվող գազերի ճնշումների վերահսկման համար • Շնչառության ղեկավարման և վերահսկման գունավոր էկրանով մոնիտոր • Գոլորշացուցիչների երկու տեղ, ավտոմատ բացառող միաժամանակ երկուսից օգտվելու հնարավորությունը /Auto Exclusion, 2 vap./ • Անեսթետիկ գազերի հեռացման համակարգ /AGSS/	հատ	22000000	22000000	1	Ք. Երևան, Մուրացան 114 հասցեով:	1	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ մասնավորապես պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90

				• Էնդոտրախեալ էժեկտորային արտածծիչ և հեռացված հեղուկների կուտակման ունակություն • Ներկառուցված CO2 և անեսթետիկ գազերի իրական չափումների միավոր • Խնամյալի մոնիտոր՝ տեղակայված շրջվող հենարանի վրա ձախ սարքի կողմում • Գոլորշացուցիչ Isoflurane • Աքսեսուարների հավաք • մեծահասակների՝ 22մմ շնչառական կոնտուրների բազմակի օգտագործման 1 հավաք; պեդիատրիկ՝ 15մմ շնչառական կոնտուրների բազմակի օգտագործման 1 հավաք; հոսքի տվիչներ 5 հատ; մանրէազերծման զտիչ ախտահանվող 5 հատ; DIN ստանդարտի արագ միացման/անջատման ծայրակալներով 1,5մ երկարությամբ գազատար խողովակներ թթվածնի և օդի ԹԱՕ /ALV/ միավոր Ղեկավարվող բնութագրերը և տիրույթները՝ • Շնչառության հաճախությունը՝ 4...60 մեկ րոպեում • PEEP՝ 0 ... 20սմ. H2O • Շնչում /արտաշնչում /Ti:Te/՝ 4:1 ... 1:4 • Շնչառական ուղիներում առավելագույն ճնշումը (Pmax) 15...70 սմ.H2O • Շնչառության ծավալը /Tidal Volume (Vt)/ 20 ... 1400 մլ VCV ռեժիմում և 20 to 1100 mL in SIMV/PS ռեժիմում • Շնչառության դադար /Inspiration pause (Tip:Ti)/ 0...50 % • SIMV ներշնչման տևողությունը /Inspiratory time/՝ 0.3 ...4.0 վրկ • Ներշնչման ճնշումը /Inspiratory pressure (Pinsp) / PEEP + 5 ... 65 սմ. H2O • Ներշնչման հոսքը (Insp.Flow) ՝ 10...75 լ/ր VCV և PCV ռեժիմներում և 10...85լ/ր in PS և SIMV/PS ռեժիմներում • Ճնշման աջակցության մակարդակը /Pressure Support Level (PPS)/՝ PEEP + 3 ...20 cmH2O • Ապնոէ-վենտիլյացիա ռեժիմում շնչառության նվազագույն հաճախությունը Min. frequency for apnoe-ventilation (Freq. Min.)՝ 3 ... 20 մեկ րոպեում և "OFF" • Տրիգերավորման մակարդակը /Trigger level/ ՝ 2 ... 15 լ/ր Պաշտպանվածության ներկառուցված ֆունկցիաները՝ • O2 /N2O խառնուրդում թթվածնի կոնցենտրացիայի վերահսկում /S-ORC/ • N2O մատակարաման դադարեցում եթե O2 թարմ գազը չի մատակարավում կամ մատակարարվում է 0.2 լ/ր. պակաս • Կարմիր ՀԲԴ ազդանշանավորում (flashing red LED) եթե O2 ճնշումը ≤1.38 ± 0.27 bar (4 psi). • Էլեկտրասնուցման ընդհատման պարագայում, գազերի մատակարարումը և ձեռքով աշխատանքի հնարավորությունը պահպանվում է • Շնչառական գծերում 75 ± 5 սմ. H2O սահմանային ճնշման գերազանցման պարագայում պաշտպանիչ կափույրը բացվում է • Շնչառական գծերում բացասական 8 ± 2 սմ. H2O սահմանային ճնշման պարագայում պաշտպանիչ կափույրը բացվում է, Շ նչառության մոնիտորինգ 10.4" (26,0սմ.) գունավոր, պայծառության ավտոմատ կարգավորմամբ էկրանով ներկառուցված մոնիտոր • O2 -ի կոնցենտրացիան • Շնչառության հաճախությունը • Իրական շնչառական ծավալը • Իրական րոպեական ծավալը 0 t...99 լ/ր • Առավելագույն ճնշումը • PEEP • Միջին կամ հաստատուն մասի ճնշումը ընտրովի • Շնչառությունը ներկայացնող իրական գրաֆիկներ Շնչառական համակարգը ներառում է 1,5լ ծավալով աբսորբեր, որը տեղակայված է շարժական, բարձրությունը կարգավորվող լծակի վրա՝ սարքի ձախ կողմում Գոլորշացուցիչ Isoflurane 360մլ անեսթետիկով լիցքավորման ծավալով: ապահովում է կիրառվող անզգայացման բոլոր գործընթացները 10 ... 40°C շրջակա ջերմաստիճանների տիրույթում; Ապահովում է անեսթետիկի կարգավորվող հոսքը 0.25...15լ/ր. տիրույթում; համալրված է անեսթետիկի լիցքավորման ադապտերով: Խնամյալի մոնիտոր, պարտադիր և ընտրովի չափվող և վերահսկվող պարամետրերը և բնութագրերը Վերահսկվող ստանդարտ պարամետրերը՝ • ԷՍԳ							օրացուցային օրվա ընթացքում

				• Սրտի կծկումների հաճախություն / ՍԿՀ/ • Ռիթմեր • Ռիթմի վարողի իմպուլսներ • Էքստրասիստոլիա • ST սեգմենտի շեղում • Շնչառություն • Պուլսի հաճախություն • Ոչ ինվազիվ արյան ճնշում • SpO2 • Ածխաթթու գազ CO2 • Մարմնի ջերմաստիճան • Ինվազիվ արյան ճնշում 3 կանալներով • Անեսթետիկ գազեր Դիսպլեյի բնութագրերը՝ • Գունավոր TFT հպումային էկրան, անկյունագիծը 12" • Լուծանելիությունը 800 × 600 • Ընտրովի գրաֆիկների առավելագույն թիվը ոչ պակաս, քան 7 • Կիսահաղորդչային լուսային ինդիկատորներ սնուցման, տագնապի և լիցքավորման Տրենդերի դիտարկման հնարավորությունները՝ • Կարճաժամկետ 1 ժամ 1 վրկ. լուծանելիությամբ • Երկարաժամկետ 120 ժամ 1 րոպե լուծանելիությամբ • 1200 ոչ ինվազիվ արյան ճնշումների գրանցումների ընթերցում Տպող սարք՝ • Ջերմազգայուն թղթի վրա տպող, լայնությունը 45մմ: • Տպվող գրաֆիկների թիվը 3 • Տպելու արագությունը 12.5, 25, 50 մմ/վրկ • Գրանցման տեսակները ՝ ավտոմատ 8-վայրկյանանոց; տագնապային իրավիճակներում; տրենդերի; դիտարկումների; դեղորայքի հաշվարկների Աշխատանքային ռեժիմները և բնութագրերը՝ 1. ԷՍԳ • Գրանցման ռեժիմները՝ 3 էլեկտրոդանոց մալուխով I, II, III արտածումները, 1 գրաֆիկ; 5 էլեկտրոդանոց մալուխով I, II, III, aVR, aVL, aVF, V, 2 գրաֆիկ: • Գրանցումների լուծանելիությունը ՝ 1.25 մմ/մվ , 2.5 մմ/մվ., 5 մմ/մվ.10 մմ/մվ, 20 մմ/մվ, ավտոնոմ: • Տեսածրման արագությունները 6.25, 12.5, 25, 50 մմ/վրկ.: • Թողունակության շերտը՝ ախտորոշման ռեժիմում- 0.05-ից 150 Հց.; մոնիտորինգի ռեժիմում 0.5-ից 40 Հց.; վիրաբուժական ռեժիմում 1-ից 20 Հց.: • 50 Հց. ռեժեկտորային զտիչ: • Մուտքի դիֆերենցված իմպենդանսը 50ՄՕհմ.: • Մուտքային ազդանշանների տիրույթը ±8 մՎ.: • Էլեկտրոդի պոտենցիալի թույլատրելի շեղումների տիրույթը ա՝ ±500 մՎ.: • Էլեկտրոդի անջատման հայտնաբերման օժանդակ ֆունկցիա 2. Սրտի կծկումների հաճախություն / ՍԿՀ/ • Չափումների տիրույթը 15 -ից 350 կծկում/ր.: • Ճշգրտությունը ±1 %: • Լուծանելիությունը 1 կծկում/ր կամ ±2 %: • Զգայունությունը 300 մկՎ.: 3. ST սեգմենտի շեղում՝ • Չափումների տիրույթը ՝-2.0 -ից 2.0 մՎ.: • Ճշգրտությունը ՝ ±0.02 մՎ. կամ 10 % (–0.8 -ից 0.8 մՎ): • Լուծանելիությունը ՝ 0.01 մՎ.: 4. Շնչառություն • Չափումների եղանակը՝ իմպենդանսային RA-LL և RA-LA միջև • Չափումների տիրույթը ՝ от 0 до 150 շունչ/ր.:							

				• Ճշգրտությունը ՝ ±2 շունչ/ր: • Լուծանելիությունը 1շունչ/ր 5. Ոչ ինվազիվ արյան ճնշում • Չափումների եղանակը օսցիլոմետրիկ • Չափվող պարամետրերը զարկերակային ճնշումները՝ սիստոլիկ /SYS/ 40 – 300 մմ.ս.ս տիրույթում, դիաստոլիկ /DIA/ 10-215 մմ.ս.ս. տիրույթում, միջին /MAP/ 20-235մմ.ս.ս. տիրույթում: • Չափումների լուծանելիությունը 1մմ.ս.ս.; ստանդարտ շեղումը 8մմ.ս.ս.: • Չափումների հնարավոր ռեժիմները՝ Ձեռքի; Ավտոմատ 1, 2, 3, 4, 5, 10, 15, 30, 60, 90, 120, 240 և 480 ր. ինտերվալներով; Անընդհատ 5ր տևողությամբ ցիկլերով, 5վրկ. Պարբերությամբ: • Չափումների տիպային տևողությունը 30 – 45 վրկ. , առավելագույն տևողությունը 120վրկ.: 6. Ավելցուկային ճնշման հեռացում • Մեծահասակների պարագայում՝ 297 ±3 մմ.ս.ս. • Երեխաների պարագայում՝240 ±3 մմ.ս.ս. • Նորածինների պարագայում 247 ±3 մմ.ս.ս. 7. Պուլսի հաճախությունը ոչ ինվազիվ արյան ճնշման չափման ընթացքում • Ճշգրտությունը՝ ±3 պ/ր. կամ 3,5 % / մեծը/ 8. SpO2 Nellcor Module • Չափման տիրույթը 0-100 % • Լուծալեիությունը ՝1 % • Ճշգրտությունը՝ 70% -ից 100% SpO2): DS-100A, OXI-A/N(Adult) ±3% OXI A/N(Neonate) ±4% • Լուծանելիությունը 1 bpm • Տվիչի ալիքի երկարությունը 660 և 900նմ.մոտավոր • Պերֆուզիայի ինդեքսի չափման տիրույթը՝ 1-10 • Պուլսի հաճախության չափման տիրույթը՝ 20 - 300 պ/ր: • Ճշգրտությունը ՝3 պ/ր 20 -ից 250 պ/ր տիրույթում, արդյունքի թարմացումը վայրկյանը մեկ 9. Մարմնի ջերմաստճան • Չափումները իրականացվում են երկու կանալներով • Չափումների տիրույթը 0 - 50 °C • Լուծանելիությունը ՝ ±0.1 °C • Ճշգրտությունը՝ ±0.1 °C • Արդյունքի թարմացումը 1-2 վրկ.ընթացքում 10. Ինվազիվ արյան ճնշում 3 կանալներով • Չափման տիրույթը ՝ Art: 0-ից 300 մմ.ս.ս; PA -6-ից 120 մմ.ս.ս.; CVP/RAP/LAP/ICP -10 -ից 40մմ.ս.ս.; P1/P2 -50-ից 300մմ.ս.ս. • Չափման ճշտությունը ՝ ±2% կամ ±1մմ. ս.ս. • Լուծանելիությունը՝ 1մմ. ս.ս. 11. Ածխաթթու գազ CO2 /հիմնական հոսքից/ • Չափումների տիրույթը՝ etCO2: 0 -ից 150 մմ.ս.ս.; FiCO2: 3-ից 50մմ.ս.ս. • Լուծանելիությունը՝ etCO2: 1մմ.ս.ս.; FiCO2: 1մմ.ս.ս. • Ճշգրտությունը ՝ etCO2: ±2մմ.ս.ս., 0-ից 40մմ.ս.ս.;±5 %, 41-ից 70մմ.ս.ս; ±8 %, 71-ից 100մմ.ս.ս.; ±10 % 101-ից 150մմ.ս.ս. • Հաշվարկման մեթոդաբանությունը՝ BTPS 12. Անեսթետիկ գազեր • Չափումները իրականացվում են համապատասխան անեսթետիկ գազերի չափման միավորի միջոցով՝ ներշնչառության և արտաշնչման ընթացքներում: • Ցուցադրվող պարամետրերը՝ - EtCO2,FiCO2, AwRR, EtO2, FiO2, O2, N2O, EtHAL, FiHAL, EtISO, FiISO, EtENF, FiENF, EtSEV, FiSEV, EtDES, FiDES • ԱԳ-ի վարձահատում ATPD մեթոդաբանության ստանդարտով; • Զրոյի և և ընդհանուր չափաբերման աջակցություն: • Չափվող անեսթետիկ գազերը ՝ N2O, Հալոտան 0 % -ից 10 %, Իզոֆլյուրան 0 %-ից 10 %, Էնֆլյուրան 0 % -ից 10 %, Սևոֆլյուրան 0 % -ից 11 %, Դեզֆլյուրան 0 % -ից 24 %: • Լուծանելիությունը բոլոր գազերի համար ՝ 0,1 %							

				• Միաժամանակ չափվող և ցուցադրվող՝ N2O և երկու կամայական ընտրովի գազեր • Էլեկտրասնուցումը ստանդարտ 220Վ 50Հց, ցանցից, սպառվող հզորությունը 120Վտ. և ներկառուցված մարտկոցից 5000մԱժ ունակությամբ, որ ապահովում է 350 րոպեների ընթացքում սարքի բնականոն շահագործումը ավտոնոմ; • Պաշտպանվածությունը էլեկտրական ազդեցություններից EMC type Class A, CF և BF ստանդարտների համապատասխան, հեղուկներից IPX1 Լրակազմը՝ • Sp02 տվիչ նորածնային միանվագ օգտագործման /Sensor Infant/ - 5 հատ • Ինվազիվ արյան ճնշման տվիչի հավաք /IBP Pressure transducer kit/ - 5 հավաք • SP02 մատի տվիչ բազմակի օգտագործման /Finger Sensor/ - 1 հատ • ԷՍԳ մալուխ 5 էլեկտրոդների /ECG Trunk Cable,5~lead, ECG Limb Wires,5-lead/ - 1 հատ • Ոչ ինվազիվ արյան ճնշման մանժետ մեծահասակների, /NIBP Cuff Small Adult; NIBP Cuff Adult/ - 1 հատ և նորածնային /NIBP Cuff neo #1 disp.; NIBP Cuff neo #2 disp/ - 1 հատ • Ջերմաստճանի տվիչ մաշկի /Temperature Probe Skin, 3m ; Temp. Probe Housing; Temp. probe Neonatal,skin,3m/ - 1 հատ • Ջերմաստիճանի տվիչ նորածնային ռեկտալ-օրալ /Temp.probe Neonate,rectal/oral/ - 1 հատ • ԷՍԳ էլեկտրոդներ /ECG Electrodes Adult/; NIBP Cuff neo #1 disp.; NIBP Cuff neo #2 disp/- 25 հատ *Առաջարկի արժեքի մեջ ներառված են մոնտաժը, կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 24 ամսից ոչ պակաս:							

արտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:

ԳՆՈՐԴ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր Ա.Հ.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիտեք» ՍՊԸ
Ք.Երևան, Ծովակալ Իսակով 22/3
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022326301001
ՀՎՀՀ 01222077
Տնօրեն Ա.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«13» մայիսի 2019թ. կնքված
N <<ԳՀԱՊՁԲ-2019/16-13-ԵՊԲՀ>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	33171700	Ինհալացիոն անզգայացման սարք	0	0	0	0	22000000	22000000	22000000	22000000	22000000	22000000	22000000	22000000	22000000	

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:

ԳՆՈՐԴ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեդիտեք» ՍՊԸ
Ք.Երևան, Ծովակալ Իսակով 22/3
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022326301001
ՀՎՀՀ 01222077
Տնօրեն՝ Ա.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն